ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 74

Ք. Երևան **« 01 » Փետրվարի 2022 թ.**

Մի կողմից «Մանիլ» ՍՊԸ-ն /հետագայում կատարող/, որը գործում է համաձայն կանոնադրության, ի դեմս նրա տնօրեն՝ **Մ.Մալխասյանի**, մյուս կողմից **«ՀԱՅԱՏՈՄ» ՓԲԸ** /հետագայում պատվիրատու/, որը գործում է համաձայն կանոնադրության, ի դեմս նրա տնօրեն՝ **Վ.Պետրոսյանի** կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի նպատակը

Կատարողի կողմից ընդգրկված **ԾՈՎԱԿԱԼ ԻՍԱԿՈՎԻ 50/12** հասցեի թվով 2 վերելակների (մոսկովյան արտադրության) տեխ. սպասարկման և անխափան շահագործման ապահովումը:

2. Կողմերի պարտականությունները

2.1 Ապահովել եռաֆազ հոսանքի անխափան սնուցումը մինչև մեքենայական սրահի գլխավոր անջատիչը:
2.2 Առանց կատարողի հետ համաձայնեցնելու, սեփական նախաձեռնությամբ, չմիջամտել և չկատարել վերելակներիի հետ առնչվող որևէ տեսակի աշխատանքներ:
2.3 Ապահովել վերելակների փորձաքննության իրականացումը սահմանված կարգով:
2.4 Վերելակների խափանման դեպքում կատարողին այդ մասին տեղյակ պահել /ներկայացնել հայտ/:

3. Կատարողի պարտավորությունները

3.1 Ապահովել վերելակների անխափան շահագործումը:
3.2 Իրականացնել վերելակների տեխ. սպասարկումը ըստ կանոնակարգի:
3.3 Վերելակների նորոգման աշխատանքի կատարմանը ձեռնամուխ լինել պատվիրատուից այդ մասին հայտի ստացման հիման վրա:
3.4 Հերթապահների կողմից վերելակի խցիկից մարդկանց հանման աշխատանքի կատարմանը ձեռնամուխ լինել պատվիրատուից այդ մասին հայտի ստացման պահից:
3.5 Սպասարկման պրոֆիլակտիկ և նորոգման աշխատանքները իրականացնել ժամը 9:00-մինչև 18:00-ն:Հանգստյան օրերը շաբաթ,կիրակի:
3.6 Իրականացնել վերելակներիի տեխ. սպասարկումը որակավորված էլ. մեխանիկներով:

4. Վճարման կարգը

4.1 Վերելակների տեխ. սպասարկման ամսավճարը կազմում է՝
45000 (քառասունհինգ հազար) դրամ, ներառյալ հարկերը

4.2 Սպասարկման ամսական վարձի վճարումը կատարել մինչև հաջորդ ամսվա 10-ը:

5. Հատուկ պայմաններ

5.1 Վերելակների վերանորոգումը իրականացվում է պատվիրատուի միջոցներով:

6. Պայմանագրի կնքման պայմանները և ժամկետը

6.1 Պայմանագիրը կնքելու պահին նշված վերելակները պետք է գտնվեն շահագործմանը պիտանի վիճակում:
6.2 Սույն պայմանագիրը ուժի մեջ է 01 Փետրվարի 2022թ. մինչև 01 Փետրվարի 2023թ.
6.3 Սույն պայմանագիրը կարող է չեղյալ համարվել կողմերից որևէ մեկի նախաձեռնությամբ, նախօրոք՝ տեղյակ պահելով մյուս կողմին:
6.4 Սույն պայմանագիրը կազմված է 2 օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ և պահպանվում են կողմերի մոտ:
6.5 Սույն պայմանագրից ծագած բոլոր տարաձայնությունները լուծվում են ՀՀ գործող օրենսդրության համաձայն:

7. Կողմերի իրավաբանական հասցեները

«ՄԱՆԻԼ» ՍՊԸ	«ՀԱՅԱՏՈՄ» ՓԲԸ
Հասցե Բաֆֆու 27 շենք	Հասցե Ծովակալ Իսակովի 50/12
Հեռ 74-73-86	Հեռ (010) 74-21-30
ՀԲԲ Սեբաստիա մ/ճ 11500593206200	ԲՀ ՀԲԲ 11500682358300
ՀՎՀՀ 01845706	ՀՎՀՀ 01804548
ՏՆՕՐԵՆ՝ Մ.ՄԱԼԽԱՍՅԱՆ	ՏՆՕՐԵՆ՝ Վ.ՊԵՏՐՈՍՅԱՆ
Կ.Տ	Կ.Տ